ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

06.05.2017թ. ժ.11: 00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ա.Վարդանյան (իրավաբանական բաժնի պետ), Ա. Անանյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ), Ա.Առուշանյան (տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ), Ա. Մարտիրոսյան (տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ):*

**Օրակարգի նախագծում չորս հարց.**

1. ««ՀՀ ՎՊԽ 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

2. ««Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռն ու բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի» Ձև 1-ԷՀ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 27-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2017 թվականի մարտի 27-ից 28-ը « Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչի 2.9 գործողության շրջանակներում Դանիայի վիճակագրության կողմից կազմակերպած ուսուցողական այցին մասնակցել վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ.Դավթյանը, Ա.Մարտիրոսյան, Ա. Առուշանյան/*

3.2. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2017 թվականի ապրիլի 3-ից 7-ը «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 2020թ. համաշխարհային ծրագրի քննարկումներ խորագրով միջազգային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

3.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի ապրիլի 3-ից 7-ը «ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների համար կազմակերպված սեմինար-խորհրդատվությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Մ.Երիցյան /*

3.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի ապրիլի 10-ից 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության գծով» փորձագիտական և «Կայուն զարգացման նպատակների համար» աշխատանքային հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յ. Պողոսյան, Ա. Սաֆյան /*

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. ««ՀՀ ՎՊԽ 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային

վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի 48-րդ կետի ժա) ենթակետից հանել «և ատեստավորման» բառերը, սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

2. ««Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռն ու բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի» Ձև 1-ԷՀ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 27-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել՝ «Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռն ու բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի» Ձև 1-ԷՀ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի ««Էլեկտրական էներգիայի բաշխումն ու հաշվեկշիռն ըստ տնտեսության ճյուղերի» Ձև թիվ 23-Ն (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 27-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2017 թվականի մարտի 27-ից 28-ը « Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչի 2.9 գործողության շրջանակներում Դանիայի վիճակագրության կողմից կազմակերպած ուսուցողական այցին մասնակցել վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ.Դավթյանը, Ա.Մարտիրոսյան, Ա. Առուշանյան/*

3.2. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2017 թվականի ապրիլի 3-ից 7-ը «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 2020թ. համաշխարհային ծրագրի քննարկումներ խորագրով միջազգային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

3.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի ապրիլի 3-ից 7-ը «ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների համար կազմակերպված սեմինար-խորհրդատվությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Մ.Երիցյան /*

3.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի ապրիլի 10-ից 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության գծով» փորձագիտական և «Կայուն զարգացման նպատակների համար» աշխատանքային հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յ. Պողոսյան, Ա. Սաֆյան /*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ